



38. ԴԹՄԻ ԱԽՃԻԿԸ

Գըլնի, չըլնի, մե ախկատ մարթ գըլնի, մե կնիկ: Էս մարթ ու կնիկը էրեխա չունին, եփ դառցան վաթսուն տարեկան, պառավը մե էրեխա բերեց, էն էլ ինչ էրեխա՝ Դթում: Մե բոպեյվա մեջ սաղ ջեղը լցվում ա, թե էսինչ պառավը դթում ա բերե: Բիձեն ու պառավը խայտառակ են հըլնում, օր ջոջություն, խայտառակություն: Ինչ անին, հնար չըկար, բերին Դթումը փաթըթին շորը, դրին թունդրա շուրթը, որ չըմրսի, չըխիվնդնա: Էս Դթումը քանի գնաց, ջոցավ, դառցավ մե եքա: Խորը-մոր հետևից գլորվելով ման էր գալում, խոսում էր: Մարթիկ մնացեր ին զարմացած: Դթումն էլ խոսա՞: Մե օր ըստոնց թաղի ախճիկներն ուզում ին էթին բանջար բերելու: Պառավն աղաչեց, որ հիրա Դթմին էլ տանեն: Ախճիկները ծծղալով քցին հետևները, գլոր-գլոր տարան չուերը: Բանջար քաղին, ավել քաղին, Դթումի խրմար էլ քաղին, խուրց կապին, Դթումին էլ դրին մեջը, նստան դինջնալու: Դինջան, ետո գացին չայը լողանալու: Դթումն էլ գոխառուկ խըրցի մըչից դուս էկավ, գնաց մե տալզա հինքն էլ լողացավ: Էս լողանալու ժամանակ թաքավորի տղեն խոտերի մեջ պարկուկ էր, ախճիկներին էր հիշկում: Ախճիկները ըտրան չին տեսե: Լողացան, էկան հիրանց շորերը խաքան, Դթումն էլ էկավ մտավ հիրա դորունի մեջը: Ախճիկներն էկան տեսան՝ խուրցը քանդուկ ա, Դթումը գլորվեր ա մե յանի, ծծղացին, էլի խուրց կապին, Դթումը դրին մեջը: Ախճիկներից մեկը Դթումն էլ, խուրցն էլ շկեց էկավ տունը, բերեց տիկեց պառվին: Պառավը շատ ուրիսցավ, որ հինքն էլ ավել ու բանջար բերող ունի, Ասսուն փարք էր տալում, ուրինում: Զայնամ թե Դթում ա:

Հիմի խաբար տանք թաքավորի տղից: Լողանալու ժամանակ թաքավորի տղի աշկը Դթմի վրեն էր, տեսավ, որ դթմի մչից մե ախճիկ դուս էկավ, ոնց որ մե տասնըխնդած լուսնակ, լողացավ ու էլի էկավ մտավ դթմի մեջ:

Էս տղեն սիրահարվեց Դթմի ախճկա վրեն:

Հիրկուն տիսուր-մալու գնաց տուն:

Թաքավորն ու թաքուհին որ տեսան, վախեցան, մտածեցին՝ չըլնի տղին մե բան ապատահե, խիվանդ ա:

Խարցրին, տղեն ասավ.—Ես խիվանդ չեմ, Հըմա սրտիս մեջը մեծ դարդ կա:

—Ի՞նչ դարդ, —խառցրեց մերը:

—Են դարդը, այ' մեր, որ ես սիրում եմ Դժմի ախճկան:

—Ի՞նչ Դժմի ախճիկ, այ' տղա, Հո խելքտ չե՞ս կորցրել;

—Զէ՛, մայրի՛կ ջան, խելքս վրես ա, Հըմա դուզը բան եմ ասում:

—Տղա՛, ի՞նչ դուզը բան: Դժմի ախճիկը դուզը բա՞ն ա:

—Դուզը բան ա, բա ի՞նչ ա:

Մերը տղի ասածից բան չէր խասկնում:

Տղեն ասավ.—Մայրի՛կ, այսինչ գյուղում, այսինչ մարթի ախճիկը մտնում ա Դժմի դորունի մեջ, ես էտ Դժմի մեջի ախճիկն եմ ուզում: Կա-չըկա, իմն էտ ախճիկն ա, Հուրիշ ախճիկ չեմ ուզում:

Մերը գնաց, Հալը-զսեն թաքավորին ասեց:

Թաքավորը, որ լսաց, զարմացավ, ասավ.—Ամոթ ա, այ' թաքուի: Մենք թաքավոր մարթ, թողենք թաքավորների, իշխանների, նազիր-վազիրների ախճիկները, Էթանք մեր մեկուճար տղին մե չըսիր պառպի Դժո՞ւմ ուզենք: Աշխարքի մեջ խայտառակ զըլնենք, ամօթու մարթի հերս չենք կանա հիշկա, ժողովուրթը մեզնից հերս կըթեքա:

Մարթ ու կնիկ շատ խոսացին, իշքան թաքուին ասավ. «Մե տղա ունինք, խամրը մի՛ կողրա», Հնար չելավ:

Կանչին տղին, ուզին Համոզեն, Հնար չելավ:

—Զէ՛, որ չէ՛, իմը, որ կա Դժմի ախճիկն ա:

Թաքավորը, որ տեսավ էլ Հնար չըկա, վազիր-վաքիլին հորկեց, գացին նշանին:

Մե ամիս ետո էկան Դժմին զարթարին, խաս ու դումաշով փաթթին, ուսկով, մարքրիդով զարթարին, բլազուկները Դժմի պոչից կախին, տվին փեսի թեկ տակը, առոք-փառոք բերին թաքավորի պալատը, տարան զրին փարդի հետեր:

Նստան խաց ուտելու, մեկ էլ տեսան Դժումը զլորվավ, էկավ օթաղի մեչտեղ կայնավ: Թաքավորի ախսպոր կնիկը թափկով տվեց, Փուտրոլի նման էլի զլորեց փարդի հետեր: Թաքավորի տղեն տեսավ, ամս քաշեց: Թագուհու սրտին էլ դուր չեկավ տեքեր կնգա արածը, Հըմա բան չասավ:

Թաքավորի ախսպոր կնիկն ասավ.—Հընչի՞ եք ախ քաշում, վախենո՞ւմ եք էդ Դժումը կողրվի, նեխի, էլ Դժո՞ւմ չըլնի, որ էփեք թաքավորի տղեն ուտա:

—Խորոխպո՛ր կնիկ, —ասավ թաքավորի տղեն, —շատ անպետք լիզու ունես: Քո ի՞նչ գործն ա, թե իմ կնիկը Դթում ա, թե՞ չեղնից լավն ա:

Թաքավորի ախազոր կնիկը չար ծծղաց:

Տղեն գնաց փարղի մոտ, ասավ. —Դթմի՛ ախճիկ, ես չեղի ավել քաղելու տեղը լողանալու ժամանակը տեսա, դո՛ւս արի, մեխակ եմ, դու տենում ես իմ վրեն իմալ են ծծղում:

Ախճիկը փարղի քամակից ասավ. —Թո ծծղան, իմ սիրելի՛ ամուսին, ծծղողը վերջն ա ծծղում:

Տղեն սրտպնդվագ:

Հանգարց փարղի հետևը մե ղրփոց լսացին:

Փարղեն բացին, ի՞նչ տենան. մե ախճիկ ա կայնած, մե ախճիկ, որ ոչ լեզվով կարելի ա պատմել, ոչ էլ նկարիչը կանա նկարա: Կիսուրը էկավ փաթըթվավ, վազավ թաքավորին խարար տարավ: Թաքավորը, վազիրը, վաքիլը, իշխանները վազեվազ էկան, տեսան զարմացան: Թաքավորը նորից հրաման տվեց, օխտ օր, օխտը քշեր խառնիս արին, ուրիսցան: Դուք էլ ուրա՛խ մնաք: Երգնքից իրեք խնձոր հընդգամ. մեկը՝ ասողին, մեկը՝ թազա խարսին, մեկն էլ՝ թազա թաքավորին:

